ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱԶԱՐՅԱՆ

Նորընտիր Տ. Ասողիկ սրբազանը, ավազանի անունով Ղազարոս, ծնվել է 1909 թվականին Բեհեսնի քաղաքում (Հորրորդ Հայք, Մալաթիա)։

Համաշխարհային առաջին պատերազմին, տարագրության արյունոտ ճանապարհին կորցնում է իր հարազատներից շատերին և որպես որբ ընդունվում է նախ Տարագրելոց և ապա Արարատյան որբանոցներում 1919—1920-ական թվերին, Մուսուլում և Բաքուպայում։

1924 թվականին ընդունվում է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը։ Ուսումնական պատանու առաջ բացվում են գիտության դռները և խաղաղ կյանքի հնարավորություններ։ Նա հաջողությամբ է ավարտում Ժառանգավորաց վարժարանի դասարանական բաժնի քառամյա դասընթացը և 1928 թվականին սարկավագ է ձեռնադրվում Դուրյան պատրիարքից և իր կյանքը ընդմիշտ կապում վանական գործունեության հետ։

Աշակերտել է Դուրյան և Գուշակյան պատրիարքներին և Բարգեն Կյուլեսերյան եպիսկոպոսին Երուսաղեմում։

1932 թվականին նա ձեռնադրվում է կուսակրոն քահանա Թորգոմ պատրիարքի ձեռքով և Երուսաղեմի Պատրիարքական Ս. Աթոռից ներս կոչվում է վանական-վարչական պատասխանատու պաշտոնների։

1936—1937 ուսումնական տարում ծառայում է Յաֆա քաղաքի ազգային վարժարանում որպես ուսուցիչ և հոգևոր հովիվ։

1937 թվականի վերջին, Թորգոմ պատրիարքի հրամանով նշանակվում է հոգևոր հովիվ Մայրագույն Արևելքի՝ Չինաստանի, Մանջուրիայի, Ճապոնիայի։

Ասողիկ վարդապետը մեծ եռանդով և անձնվիրությամբ ծառայում է հայ ժողովրդի այդ հավատացյալ բեկորներին և մեծապես սիրվում ու հարգվում։

1941—1945 թվականներին Ասողիկ վարդապետը բանտարկվում է ճապոնացիների կողմից Խարբինի համակենտրոնացման ճամբարում, և երբ Սովետական Բանակը հասնում է Մանջուրիա, ազատվում է և վերադառնում իր հոգևոր պաշտոնին։

Երկար և արկածալից բացակայությունից հետո, 1950 թվականին վերադառնում է Երուսաղեմ, իր միաբանության գիրկը, մի

քիչ հանգստանալու։ 1951 թվականին հովվական պաշտոնով հրավիրվում է Կալիֆոռնիայի Լոս-Անջելոս քաղաքը, ուր պաշտոնավարում է երեք ու կես տարի։

1954 թվականին նա նորից Հեռավոր Արևելքումն է, այս անգամ Ավստրալիայում, որպես հոգևոր հովիվ։

1957 թվականի սեպտեմբերին ուխտի է գալիս Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք։

1957 թվականի նոյեմբերի 24-ին եպիսկոպոս է ձեռնադրվում և նշանակվում Հայրապետական նվիրակ և առաջնորդ Հեռավոր Արևելքի երկրների՝ Հնդկաստանի, Չինաստանի, Ինդոնեզիայի, Ավստրալիայի, Մալայայի և Բիրմայի։

Ասողիկ սրբազանը քաղցր հոգի և բնավորություն ունեցող, հավատավոր և նվիրված մեր լավագույն հոգևորականներից մեկն է։ Նա գտնվում է իր ուժերի ծաղկման և գործունեության հասուն շրջանում։ Մայր Աթոռը և Հայ Եկեղեցին ու ժողովուրդը նրանից սպասում են նոր ծառայություններ։

Մեր բոլորի հավատն այն է, որ սրբազանը կարդարացնի այդ վստահությունը։